



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • I Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia

(+374 60) 71-00-92, info@armin.am, www.armin.am, www.yసు.am

№ 3/2016-2017 « 18» մայիս 2016 թ.

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3/2016**

**ԵՊՀ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ 2016  
Թ. ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ**

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 27 (քսանյոթ) անդամներից 25-ը (քսանհինգ):

Նիստը նախագահում էր ռեկտոր, ՀՀԻ տնօրեն Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ՀՀԻ 2016 թ. գործունեության ընթացիկ հաշվետվությունը (զեկուցող՝ Մհեր Հովհաննիսյան):
2. ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիայի պատրաստած «Թուրք-ադրբեջանական վտանգը և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները» խորագրով մենագրությունը (հեղ.՝ Դավիթ Ջամալյան) հրատարակության երաշխավորելու հարց:
3. Ընթացիկ այլ հարցեր:

**Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:**

**1. Լսեցին.** 2016 թ. ՀՀԻ գործունեության ծրագրի ընթացիկ հաշվետվությունը: Փոխտնօրեն Ս. Ս. Հովհաննիսյանը ներկայացրեց հաշվետվությունը:

**Որոշեցին.** - Ընդունել 2016 թ. ՀՀԻ գործունեության ծրագրի ընթացիկ հաշվետվությունը:

**2. Լսեցին.** - ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիայի պատրաստած «Թուրք-ադրբեջանական վտանգը և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները» խորագրով մենագրությունը (հեղ.՝ հ.գ.թ. Դավիթ Ջամալյան) հրատարակության երաշխավորելու հարցի շուրջ: Ռեկտոր, ՀՀԻ տնօրեն Ա. Ն. Սիմոնյանն ասաց, որ Դ. Ջամալյանի մենագրության հարցի շուրջ առկա է ՀՀԻ համակարգող հանձնախմբի դրական եզրակացությունը և առաջարկեց դրական ընթացք տալ աշխատանքը տպագրության երաշխավորելու համար ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիայի ներկայացրած միջնորդությանը:

**Որոշեցին.** – 2015-2016 թթ. հետազոտությունների հիման վրա ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիայի պատրաստած «Թուրք-ադրբեջանական վտանգը և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները» խորագրով մենագրությունը (հեղ.՝ հ.գ.թ. Դավիթ Ջամալյան) երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ս. Հովհաննիսյան

18.05.2016թ.

Կ. Տ.